ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱԼԵՔՍԵՅ ՀԵՔԻՄՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Արաբկիրի թիվ 49 փողոցն անվանակոչել ԽՍՀՄ ներքին ծառայության՝ ոստիկանության գեներալ-մայոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, երգահան Ալեքսեյ Հեքիմյանի անվամբ ՝ «Ալեքսեյ Հեքիմյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆ

ԼԵՎՈՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱԼԵՔՍԵՅ ՀԵՔԻՄՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԽՍՀՄ ներքին ծառայության՝ ոստիկանության գեներալ-մայոր, ՀԽՍՀ և Դաղստանի արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, երգահան Ալեքսեյ Գուրգենի Հեքիմյանը ծնվել է 1927 թվականի մայիսի 10-ին՝ Բաքվում:

Ալեքսեյի մորական կողմը Լենինականից էր, իսկ հայրը ծնվել էր Շուշիում:

Երեք տարեկան էր, երբ հայրը լքեց նրանց. մայրն ու որդին տեղափոխվեցին Երևան:

1941 թվականին Ալեքսեյն ավարտեց Երևանի Ս.Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի ջութակի բաժինը, 1943 թվականին՝ Երևանի Վ. Մայակովսկու անվան միջնակարգ դպրոցը:

Հայրենական պատերազմն ընդհատեց իր հետագա ուսումը, և ընտանիքը պահելու համար 1942-1946 թվականներին Ալեքսեյը ստիպված եղավ աշխատել որպես Անդրկովկասյան երկաթուղու Երևանի բաժանմունքի էլեկտրիկ, ապա՝ մեխանիկ:

1944 թվականից մասնակցում էր Խարկով քաղաքի վերականգնման աշխատանքներին, որտեղ ընկերացավ հին ֆրոնտովիկների հետ, ովքեր խորհուրդ տվեցին աշխատել ներքին գործերում, և որոնց հորդորով Ալեքսեյն ավարտեց Խարկովի երեկոյան դպրոցը:

1946 թվականին վերադառնում է Երևան և ծառայության է անցնում ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության համակարգում:

1947 թվականին իրեն ուղարկում են Վլադիմիր քաղաք՝ սովորելու միլիցիայի միջնակարգ դպրոցում:

1954 թվականին ընդունվում է ԽՍՀՄ ՆԳՆ Բարձրագույն դպրոց և տեղափոխվում Մոսկվա, որտեղ սկսում է մասնակցել նաև դպրոցի մշակութային կյանքին: Հենց այդտեղ է ծանոթանում իր ապագա կնոջ՝ Վալենտինա Կարպովայի հետ, ով երգում էր դպրոցի երգչախմբում:

1955 թվականին Բարձրագույն դպրոցն ավարտելուց հետո, ավագ լեյտենանտ Հեքիմյանը ստանձնում է Սերպուխովո քաղաքի ներքին գործերի բաժնի պետի պաշտոնը, իսկ 1963 թվականից, արդեն գնդապետ Հեքիմյանը՝ Մոսկվայի մարզի քրեական հետախուզության պետի:

1970 թվականին Ալեքսեյն Հեքիմյանին շնորհվում է միլիցիայի գեներան-մայորի կոչում, սակայն 1973 թվականին, առողջական խնդիրների պատճառով, որոնք ձեռք էր բերել ծառայության ընթացքում, դիմում է համակարգից դուրս գալու խնդրանքով:

Ճակատագրի բերումով ծանոթացանում է ականավոր ղարաբաղցիների հետ, որոնք առանցքային դեր են խաղում նրա ինքնաճանաչման գործում:

Նրանցից մեկը հայտնի հայ բանաստեղծ Աշոտ Գրաշին էր, որի հետ կոմպոզիտորը ծանոթացավ 1971 թվականին: Հետագայում Գրաշիի բանաստեղծությունների հիման վրա երգերի շարք գրեց, որոնց թվում էր նաև «Ղարաբաղի եղնիկ» ստեղծագործությունը:

1973 թվականին նաև Արամ Խաչատուրյանի առաջարկով Հեքիմյանին ընդունում են ԽՍՀՄ կոմպոզիտորների միություն: Ծանոթանում և սկսում է համագործակցել Ռոբերտ Ռոժդեստվենսկու հետ, իսկ 1981 թվականին լույս է տեսնում Վաղթանգ Կիկաբիձեյի կատարմամբ 10 երգերից բաղկացած սկավառակը: Ծանոթությունը Կիկաբիձեյի հետ, որը հետագայում վերածվում է ընկերության, լինում է հետաքրքիր պայմաններում՝ լի զավեշտներով, ինչի մասին հաճախ է հիշում Կիկաբիձեն:

Հեքիմյանի երգերը կատարում էին շատ-շատերը. Աննա Գերման, Լյուդմիլա Զիկինա, Իոսիֆ Կոբզոն, Վաղթանգ Կիկաբիձե, Մուսլիմ Մագոմայեվ, Լև Լեշենկո, Նիկոլայ Գնատյուկ, Սոֆիա Ռոտարու, հայ կատարողներից՝ Լուսինե Զաքարյան, Ռուբեն Մաթևոսյան, Գեորգի Մինասյան և այլոք:

Բացի Գրաշիից, Հեքիմյանի կյանքում որոշակի դեր խաղաց նաև մարշալ Բաղրամյանը: 1973 թվականին նա ներկա էր Հեքիմյանի՝ Կինոյի տանը կազմակերպված հեղինակային երեկոյին, որտեղ հավաքվել էր Մոսկվայի նաև հայկական վերնախավը:
Հետագայում հրամանատարի մոտ կազմակերպած հանդիպումներից մեկի ժամանակ Հեքիմյանը ծանոթանում է Մոսկվայում բնակվող մի շարք ղարաբաղցիների հետ՝ հայտնի բժիշկներ, ակադեմիկոսներ, զորահրամանատարներ. հենց նրանք էլ դեր խաղացին պատմական հայրենիք այցելելու որոշման հարցում:

1981 թվականի աշնանը՝ մահից մեկ տարի առաջ, Ալեքսեյ Հեքիմյանն իրականացրեց իր վաղեմի երազանքը և այցելեց հոր հայրենիք՝ Լեռնային Ղարաբաղ: Ստեղծագործական ուղևորությունը ոգեշնչեց նրան, և լույս աշխարհ եկավ երգերի մի նոր շարք, որոնցից առաջինը՝ «Ղարաբաղցին»:
«Ղարաբաղցի» երգը նվիրված էր այդ շրջանի բոլոր ականավոր հայորդիներին՝ ուժեղ, արի, աշխատասեր մարդկանց, որոնց ճանաչում և որոնց հետ ընկերություն էր անում Հեքիմյանը: Կարո՞ղ էր արդյոք կոմպոզիտորը ենթադրել, որ իր գրած երգը Ղարաբաղյան պատերազմի տարիներին ժողովուրդն այնքան կսիրի, որ ստեղծագործությունը կդառնա հայրենի հողի անկախության համար պայքարող զինվորների օրհներգը:

Հեքիմյանը գրել է ժողովրդական-քաղաքային ոճի ավելի քան 300 երգ:
1982 թվականին «Գարուն է գալիս» երգի համար նրան շնորհվել է առաջին մրցանակ: Առավել հայտնի են՝ «Բարի արագիլ», «Կռունկ, բարով դառնաս», «Երգիր ինձ համար», «Ղարաբաղի եղնիկ», «Իմ Հայաստան», «Ղարաբաղ» և այլ երգեր:
Համեստ մարդ էր Հեքիմյանը, ով անգնահատելի ներդրում ունեցավ նաև հայկական երգարվեստում, ինչի համար իրեն շնորհեցին ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչումը:

1982 թվականի ապրիլի 24-ին ՆԳՆ հոսպիտալում նրա սիրտը չդիմացավ. պատմում են, որ դաշնամուրի առջև նա իր վերջին կատարումները նվիրեց բժիշկներին՝ մահից ժամեր առաջ…

Ալեքսեյ Գուրգենի Հեքիմյանը հուղարկավորված է Երևանում՝ Թոխմախի գերեզմանատանը:

Ալեքսեյ Հեքիմյանն ունի երկու որդի. Ռաֆայել Հեքիմյանը՝ ոստիկանության գնդապետ, Միքայել Հեքիմյանը՝ կոմպոզիտոր:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆ

ԼԵՎՈՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱԼԵՔՍԵՅ ՀԵՔԻՄՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Ալեքսեյ Հեքիմյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱԼԵՔՍԵՅ ՀԵՔԻՄՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Ալեքսեյ Հեքիմյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆ

ԼԵՎՈՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ